Բարև Ձեզ հարգելի հյուրեր

Այսօր հրավիրել ենք Ձեզ ներկա գտնվելու մեր յուրահատուկ դասին, որի թեման է «Համացանցի օգտագործումը»: Ինչու ենք ընտրել այս թեման: Ինչպես գիտեք օրեցօր ինտերնետից օգտվողների քանակը աճում է, և աճում է ոչ թե մեկ անձով, այլ հարյուրավոր օգտատերեր են միանում համաշխարհային սարդոստայինի: Սարդոստայն ասվածը շատ դիպուկ է, քանզի մուտք գործողը չի կարողանում այդտեղից ելքը գտնել: Կովկասյան տարածաշրջանում Հայստանում են ամենաշատը համացանցից օգտվողները: Այսօր Հայաստանում համացանցից օգտվում է բնակչության 53.7 %-ը: Այդ օգտվողների 70 %-ը կազմում են մինչև 18 տարեկանները: Դիտարկումների արդյունքում պարզվել է որ օգտատերերի մեծ մասը չեն կողմնորոշվում ինտերնետում, անգրագետ են, խոսքը վերաբերվում է ինտերնետային գրագիտությանը:

Ամբողջ աշխարհում փետրվարի 13-ը համարվում է համացանցի ապահով օգտագործման միջազգային օր: Մենք էլ որոշեցին այդ օրը նշել յուրովի իրազեկմամբ՝բանավեճի միջոցով:

Այսօր դասը վարելու եմ ես՝ Լիլյա Հովակիմյանս

Թեմայի հետ կապված մեր դասարանը բաժանվել է երկու թիմի, այլ կերպ ասած ճակատի: Աջ մասում կանգնածները ներկայացնում են համացանցի դրական կողմերը, իսկ ձախ մասի թիմը ներկայացնում է բացասական կողմերը: Երկուսն էլ փաստերով կփորձեն հաստատել իրենց տեսակետները: Խնդրեմ, ինչպես ասում են սկսենք լավ լուրերից.

Շուշան՝------Ինտերնետի ստեղծման օրվանից շփումը հարազատների և ընկերների հետ դարձել է ավելի մատչելի և արագ: Ինչպես ասում են 21-րդ դարում թանկարժեք է **ինֆորմացիան և ժամանակը**: ժամանակը տնտեսելու հարցում մեզ օգնության է գալիս հենց համացանցը: Այժմ հարազատների և ընկերների հետ շփվելու համար տարածություն չենք անցնում և այն ժամանակը ինչ մենք տրամադրում էինք նամակը փոստ տանելու կամ կիլոմետրեր անցնելու համար, մենք այդ նույն նամակը ուղղարկում ենք առանց տանից դուրս գալու և անգամ առանց աթոռից վեր կենալու, ավելին կարող են միաժամանակ խոսել և տեսնել խոսակցին, որը գտնվում է հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա՝ այլ պետությունում:

Ջուլյա՝------ Համաձայն եմ ասածիդ առաջին մասի հետ, ինչ վերաբերվում է ինֆորմացիային և ժամանակին, բայց կարևորելով մեր ժամանակը, չեմ կարծում որ համացանցը տնտեսում է այն, ավելին, ինչպես ասվեց <<սարդոստայն մուտք գործողը չի կարողանում այդտեղից ելքը գտնել>>: Շատ դեպքերում, նույնիսկ, եթե ծրագրում ես ընետին հատկացնել ինչ-որ ֆիքսած ժամանակահատված, ենթադրենք 1 ժամ, չես

էլ նկատում ինչպես այդ մեկ ժամը արագ անցնում է ու իրականում շատ ավելի երկար ժամանակ ես անցկացնում ինտերնետում: Եվ չմոռանանք, որ գիտնականների և բժիշկների դիտարկումների արդյունքում պարզվել է որ համակարգչի դիմաց երկար նստելուց ծագում են բազմաթիվ խնդիրներ կապված ողնաշարի և տեսողության հետ:

Շուշան՝------ Ճիշտ ես, բայց ճանաչված խոսք կա <<Ամենինչ չափի մեջ է գեղեցիկ>>, այսինքն, եթե նույնիս մենք չենք կարող վերահսկել մեր ժամանակը, ապա այդ հարցում օգնության են հասնում մեր ծնողները, կամ ՊԵՏՔ է լինեն մեծահասակներ, ովքեր կսահմանափակեն այն ժամանակը, որը հատկացնում ենք ինտերնետային շփումներին:

Լիլյա՝ ------ Ձեր ասածը ես ընդհանրացնեմ կանոնի տեսքով .

Օգտագործիր համացանցը կարիքներիդ համար, բայց այն մի սարքիր քո բնակավայրը:
Համացանցը միայն օժանդակ գործիք է, այն միայն օգտագործելու համար է:
Մի՛ թույլատրիր, որ համացանցը քեզ օգտագործի:

Վարդան՝------ Համացանցը մեծ հարթակ է տրամադրում երիտասարդ ստեղծագործողներին, իրենց ստեղծագործությունները ներկայացնելու հանրությանը: Օրիակ՝ժուրնալիստներին, եթե թերթերում կամ հեռուստատեսությունում իրենց հոդվածը կամ ռեպորտաժը ներկայացնելու համար անպայման պետք է ղեկավարության հավանությանն արժանանա կամ հաստատվի մինչև հրապարակելը, ապա ինտերնետում կան մասնագիտական կամ անհատական բլոգեր, որտեղ առանց սահմանափակման կարող են տեղադրվել երիտասարդ ժուրնալիստների հոդվածները: Շատ օրինակներ կան որ շնորհալի և տաղանդավոր մարդիկ միայն իտերնետում իրենց տաղանդը ներկայացնելու շնորհիվ ճանաչում են ձեռք բերել կամ տարբեր խնդիրներ ինտերնետային քննարկումների շնորհիվ ստացել են լուծումներ կամ ուշադրության արժանացել:

Հռիփսիմե՝ ------ Բայց շատ են նաև այնպիսի հոդվածներ, որոնք տարածում են ապատեղեկատվություն կամ գրավիչ վերնագրի տակ թաքնված է ընդհանրապես վերնագրի հետ կապ չունեցող հոդված: Ավելին, եթե հոդվածը տպագրվում է թերթում դու ճիշտ ասեցիր, որ պետք է հաստատվի խմբագրի կողմից, բայց համացանցում վերահսկողություն չի իրականացվում և սահմանափակումներ չկան: Այսինքն, հոդվածները որոնք նախատեսված են մեծահասակների համար կարող են հրապարակվել այնպիսի բլոգներում և կայքերում որոնցից օգվում են անչափահասներ: Կամ այն տեսահոլովակները որոնց շնորհիվ ճանաչում են ձեռք բերում համացանցում, նույնիսկ արգելված կարող են լինել հեռուստադիտողների համար: Ավելացնեմնաև ազատ խոսքի իրավունքի մասին: Հոդվածների մեկնաբանություններում շատ դեպքերում վիրավորական գրառումներ են կատարվում, որը չեմ կարծում, որ կօգնի երիտասարդ ժուրնալիստին, ավելին մտածում եմ ,որ կլինեն նաև այնպիսի հեղինակներ, որ կհուսահատվեն և կդադարեն ստեղծագործել:

Վարդան՝------ եթե ինտերնետում լինեն միայն Լիլյայի նշած ԳՐԱԳԵՏ օգտվողներ, չեմ կարծում որ նման խնդիրներ կառաջանան:

Լիլյա՝ ------- ուրիշ կարծիքներ?

Նարինե՝-------- Ես ուզում եմ հիշեցնել որոնողական համակարգերի կարևորության մասին: Համացանցից յուրաքանչյուրօգտվող գոնե մեկ անգամ օգտվել է որոնողական համակարգերից: Կարիք չկա ապացուցել ինչքան հեշտ և արագ կարող ես գտնել ցանկացած տեղեկատվություն, ցանկացած լեզվով, նույնիս դպրոցական հանձնարարությունները, ռեֆերատները գրելու համար ժամանակ չենք ծախսում տարբեր գրքերից հանրագիտարաններից արտագրություններ անելով, որոնք սահմանափակ տեղեկատվություն էին տալիս, իսկ այժմ համացանցի շնորհիվ տնտեսած ժամանակը կարող ենք օգտագործել գտած տեղեկատվությունը սովորելու կամ ավելի հետաքրքիր ու բովանդակալից ինֆորմացիա գտնելու համար:

Աղաս՝------- Բայց ինչպես ասում են <<ով լավ է փնտրում, նա միշտ էլ գտնում է>>: Ավելացնեմ նաև, որ որոնման արդյունքում գտած ինֆորմացիան կարող է չստուգված կայքերից լինել և մուտք գործելով նման կայքեր մենք կարող ենք վնասել թե մեզ և թե մեր համակարգիչը՝ ներբեռնելով վտանգավոր՝ վիրուսներ պարունակող ծրագրեր կամ լրտեսական ծրագրեր, ինքներս էլ չիմանալով ինչպես: Ավելին չեմ կարծում որ տնտեսում ենք ժամանակը, որովհետև որոնման արդյունքում շատ ոչ պիտանի և ավելորդ ինֆորմացիա ենք ընթերցում նույնիս կարող է մեր նշած վենագրի անվան տակ որոնման արդյունքում ներկայացվի ոչ պատշաճ բովանդակությամբ նկարներ կամ հոդվածներ:

Էդուրադ՝------- հարազատների և ընկերների հետ շփման մասին ասեցինք, բայց սոցիալական կայքերի մասին դեռ ոչ: Գաղտնիք չէ որ սոց կայքերը դարձել են ինտերնետի ամենատարածված և օգտագործվող կայքերը: Ներկայիս երիտասարդությունը առանց սոցիալական կայքերի չի կարող մեկ օր անգամ անցկացնել: Սոց կայքերի միջոցով նոր ընկերներ նոր ծանոթություններ ենք ձեռք բերում: Տեղեկանում ենք ընկերների կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, անմիջական հաղորդագրությունների շնորհիվ նամակներ, նկարներ փոխանցում, հիմա արդեն նորությունների հետ ծանոթանում, մասնակցում տարբեր մրցույթների: Եվ ամենակարևորը անվճար խաղեր խաղում:

Սրբուհի՝----------Սոց կայքերի բացասական ազդեցության մասին բազմիցս խոսվել է, և նույնիսկ վերջին շրջանում շատ են ոստիկանական պարբերականներն անրադառնում այս կայքերում տիրող խաբեություններին: Ես մի քանի կարևոր վտանգների մասին տեղեկացնեմ: Անծանոթները միշտ չի որ ներկայանում են իրենց իրական տվյալներով ու բարի նպատակներով: Շատ են դրամաշորթության, խաբեության դեպքերը, աղանդավորական խմբեր ներգրավելու փորցերը: Եթե

ծանոթությունը անհաջող է լինում կամ դադարեցնում ես շփումը, հաջորդում են վիրավորանքներն ու ահաբեկումները:

Էդուրադ՝------- ուղղակի նման դեպքերում խորհուրդ է տրվում դիմել կամ իրավապահ մարմիններին կամ էլ, եթե չես ցանկանում դիմել մեծահասակներին, ապա կարող ես բողոքդ գրանցել ապահով համացանցի թեժ գիծ ծառայությունում:

Լիլյա՝---------Եթե մեր այս քննարկումը լիներ հեռուստատեսությամբ այժմ ճիշտ ժամանակը կլիներ գովազդային ընդմիջման, բայց մենք կընդմիջենք սոցիալական տեսանյութ դիտելով. Խնդրեմ……տեսանյութ

Սոնա՝---------- Ինտերնետի հիմնական նպատակն է մի վայրից մյուսը տեղեկատվության փոխանցումը և այն պետք է ծառայել ռազմավարական նպատակի համար: Ներակյումս էլեկտրոնային փոստի միջոցով իրականացնում են ֆինանսական գործարքներ, գործարար կապեր հաստատում, գարնցվում տարբեր ֆորումներում, սոցիալական կայքերում: Էլեկտրոնային փոստի միջոցով ենք դառնում իտերնետի մի մասնիկ: կարող ենք մեծածավալ տեղեկատվություն փոխանցել, անգամ կապ հաստատելճանաչված մարդկանց հետ:

Մերի՝ ---------- նամակագրային կայքերի համար որպես բացասական հատկանիշ կարող եմ նշել, որ նամակին կից հասցեատիրոջն են հասնում կայքերի հղումներ, որոնք իրենց մեջ կարող են պարունակել վնասակիր ծրագրեր և ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ, էլեկտրոնային փոստ ունեցող բոլոր օգտատերերը պետք է տեղյակ լինեն, որ ԵՐԲԵՔ չի կարելի անծանոթ կայքերում գրանցել Ձեր էլեկտրոնային հասցեն կամ անձնական տվյալները: Եթե էլեկտրոնային հասցե եք տրամադրում, ապա պատրաստ եղեք ստանալ բազմաբովանդակ գովազդային առաջարկներ, կայքերի թարամցումների մասին տեղեկատվություն, տարբեր կայքերում գրանցվելու առաջարկներ, վնասակիր ֆայլեր և այլն:

Սոնա՝---------- Ներկայիս գրեթե բոլոր նամակագրային կայքերում տեղադրված են զննարկիչներ, որոնք զգուշացնում են օգտատորին փոստաղբի մասին, որը ինչ-որ չափով կարող է կանխել վտանգավոր նամակների հոսքը:

Հայկ՝ ---------- Համացանցի միջոցով կարողանում ենք նաև տարբեր ֆիլմեր և հեռուստատեսային հաղորդումներ դիտել, որոնք զբաղվածության պատճառով չենք կարողացել ժամանակին դիտել: Ավելին հնարավորություն ունենք դիտել ֆիլմերը տարբեր լեզուներով, ինչ և օգնում է օտար լեզուների յուրացմանը: Ավելացնեմ նաև, որ ոչ բոլոր հեռուստատեսային նախագծերն են հասանելի հեռուստատուցույցով, իս ինտերնետում ոչ միայն կարող ես դիտել այլ նաև քվեարկել քեզ հետքրքրող նախագծի օգտին: Սպորտային խաղերին կարող ենք օնլայն տարբերակով հետևել, օրինակ, փետրվարին տեղի ունեցած օլիմպիական խաղերից ոչ բոլորն էին հեռարձակում, իսկ համացանցում հասանելի էին թե մրցավազքերը և թե առանձին մարզիկների ելույթները:

Սեդա՝---------- Շատ հարմար տարբեր է համացանցով ֆիլմեր դիտելը, ԲԱՅՑ, առաջին հերթին մենք վնասում են մեր տեսողությանը, եթե հեռուստացույց դիտելիս մենք նստում են հեռուստացույցից նվազագույնը 3-3 ու կես մետր հեռավորության վրա, ապա համագարգչի էկրանից 50-60 սմ ենք հեռու նստում: Իսկ ֆիլմերի կայքերի մասին ավելացնեմ, որ շատ մեծ ռիսկի ենք դիմում ընտրելով պատահական կայք կինոդիտման համար: Կայքեր կան, որոնք գրանցում են պահանջում այսինքն էլեկտրոնային փոստ, որ արդեն Մերին նշեց հետևանքների մասին, կամ, բազմաբովանդակ գովազդներ են տեղադրված կայքում, որոնք մեծամասամբ շատ գրավիչ վերնագիր ունեն, և սեղմելով դիտելով ամենաքիչը կարող ենք չիմանալով ներբեռնել լրտեսական ծրագրեր, կամ, հետևելով գովազդում նշված հղումներին ահաբեկչական խմբի ներկայացրած տեղեկավությանը ծանոթանալ, ուդեռ ևս մեկ չարիք չես նկատի թե ինչպես տեռորիտներին գաղափարակից կդառնաս: կամ, ֆիլմերը տեղադրված են առանց տարիքային սահմանափակման և հասանելի են բոլորին: Այսինքն անչափահասը հեշտությամբ կարող է դիտել այպիսի հաղորդումներ և ֆիլմեր, որոնք նախատեսված են միայն մեծահասակների համար, շատ դեպքերում էլ կան ֆիլմեր որոնքընդհանրապես արգելված են ցուցադրության համար:

Ջորջ՝---------- Չենք կարող մոռանալ խաղերի մասին: Հիմա արդեն կարիք չկա գումար վատնել խաղերի դիսկեր գնել, կամ հատուկ ինտերնետ ակումբներ գնալ օնլայն խաղեր խաղալու համար: Տանից կարող ես ընկերներիդ հետ ցանցային խաղեր խաղալ, մրցել: ներկայումս ինտերնետ տրամադրող ծառայություններն էլ տրամադրում են որակյալ և արագ ինտերնետ կապ, որի շնորհիվ կարող ենք առցանց խաղալ որակյալ և եռաչափ խաղեր:

Վոլոդյա՝---------- բացասական ազդեցության մասին Սեդայի նշվածները վերաբերվում են նաև խաղերին՝ տեսողության վնասում, գրանցում պահանջող կայքեր, բազմաբովանդակ գովազդներ պարունակող կայքեր, վնասակար ծրագրերի ներբեռնման վտանգներ, և այլն: Ասածին ավելացնեմ, որ խաղերը պետք է վերահսկվեն մեծասակնրի կողմից, կան խաղեր, որոնք նախատեսված չեն փոքր տարիքի երեխաների համար, չնայած հասանելի են: Այդ խաղերը բացի այն որ կախվածության մեջ են պահում, նաև իրենց դաժանությամբ ագրեսիա են քարոզում, որի հետևանքով երեխաները դառնում են ինքնանփոփ: Բակային խաղերից են կտրվում, գամվում են աթոռին որի հետևանքով բացի նյարդային խնդիրներից նաև ողնաշարի և գիրության հետ կապված խնթիրներ են ծագում:

Լիլյա՝---------- կարծես ավելի գերակշռում է բացասական կարծիքները

Մոնիկա՝---------- Ինտերնետում շատ են նաև բազմաբնույթ մրցույթները, ֆորումները (քննարկումները), ուսուցման տարբեր ծրագրեր նաև միջազգային, որոնց կարող ես մասնակցել տանը համակարգչիդ դիմաց նստած: մրցույթների մասնակցությունը հնարավորություն է տալիս տաղանդավոր երեխաների

բացահայտմանը անկախ տարիքից, սոցիալական վիճակից: Քիչ չեն դեպքերը, երբ հեռավոր շրջանի բնակիչն իր ստեղծագործության կամ հերոսության շնորհիվ դառնում է ճանաչված և օրինակ ծառայում մյուսների համար: Քաղաքներից հեռու գտնվող շրջանների բնակիչները ինտերնետի շնորհիվ իրազեկված են աշխարհում տիրող իրադարցությունների մասին:

Դավիթ՝ ---------- Մրցույթները մեր կյանքում շատ կարևոր տեղ են զբաղեցնում և իրոք առողջ մրցակցային պայմաններում բացահայտվում են տաղանդներ, բայց համացանցում մրցույթների մեց մասը խաբկանքներ են, օրինակ շատ են այնպիսի կայքեր, որ հաճախորդին գրավելու համար կայք մուտք գործելիս հաղորդագրություն են ցուցադրում, որ որպես կայքի միլիոներորդ այցելու շահում ունեն մեկ միլյոն դոլլար: Ով կարող է հրաժարվել օդից թափվող նման գումարից, բայց գումարը ստանալու համար պահանջվում են անձնական տվյալներ էլեկտրոնային փոստի հասցեից մինչև պլաստիկ քարտի հաշվեհամար և արդեն կասկած է առաջանում քեզ են գումար փոխանցելու, թե քարտիդ վրա եղած գումարն են յուրացնելու: Քիչ չեն նաև դեպքերը երբ անչափահասները առանց ծնողի թույլտվության գրանցում են ծնողի հաշվեհամարի մասին տեղեկատվություն և հետո գումար կորցնելու խնդիրներ ունենում: Մի նոր տարածված դրամաշորթության դեպք ևս նշեմ: Վերջին տարիներին հիմնականում աֆրիկյան պետություններից նամակի միջոցով տեղեկություն են տարածում այսպես կոչված փաստաբանները, ովքեր առաջարկում են տիրանալ միլիոնավոր դոլարների կարողությանը, որ կարող ես ժառանգության միջոցով ստանալ, եթե ներկայանաս որպես իրենց մահացած հաճախորդի ազգական, քանի որ համոզում են որ իրենց հաճախորդի հետ ազգանունները համընկնում են և օրինական դաշտում խնդիրներ չեք ունենա քանի որ իրենք փաստաբան են և կլուծեն ծագած ցանկացած խնդիր, ուղղակի սկզմնական փուլու որոշակի գումար է անհրաժեշտ մուծել գործին ընթացք տալու համար: Բավական է առաջին մուծումն անել, և արդեն գրացվեցիր միամիտների ցանկում, դառնալով խաբեության զոհ:

Լիլյա՝--------Հայկուհին և Սասունը մեզ կներկայացնեն համացանցից ապահով օգտվելու 10 խորհուրդ, համեցեք……

Հայկուհի՝----------Անկեղծ ասած, նախապատրաստվելով այսօրվա դասին փորցում էինք ինֆորմացիա հայթայթել, և որոնում կատարելով, երբ փնտրում էինք համացանցի դրական ներգործության մասին ինֆորմացիա, գտած բոլոր հոդվածներում առկա էր վտանգների մասին տեղեկատվություն: Մենք էլ որոշեցինք դուրս գրել և Ձեզ ներկայացնել 10 խորհուրդ ինչպես անվտանգ օգտվել ինտերնետից:

PPT- 10 Խորհուրդ

Սասուն՝----------խորհուրդներ

Հայկուհի ՝---------- պարզաբանում (խորհուրդ-3, խորհուրդ-5, խորհուրդ 7, խորհուրդ 9, խորհուրդ-10)

Մասնակիցները փոխոցում անցորդների են հարցրել համացանցի կարևորության մասին և Ձեզ ենք ներկայացնում հարցումների արդյունքները տեսանյութով

խնդրեմ ……. VIDEO

Վերջում առաջարկում եմ բոլորիս լրացնել համացանցի կախվածության վերաբերյալ թեստ, որի արդյունքում յուրաքանչյուրս իր համար կպարզի ինչքանով է ինտերնետը կարևոր իր կյանքում

TEST

Շնորհակալություն մեր դասին մասնակցելու համար: Կխնդրեի ներկաներից կարծիք արտահայտեիք մեր քննարկման մասին: